ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Մ.Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԸ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ., Ե., 1998, 342 էջ:

Վերջերս լույս տեսավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ.Գ.Ներսիսյանի «Պատմության կեղծարարները» աշխատությունը, ուր զետեղված են մեր անվանի պատմաբանի վերջին տասնամյակում գրված պատմագիտական մի շարք հոդվածներն ու գիտական հաղորդումները:

«Օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին ծավալուն հոդվածում գիտնականը անժխտելի փաստերով ու վկայություններով քողազերծ է անում պատմության թուրք կեղծարարների հորինած առասպելն այն մասին, թե իբր թուրք սուլթանները քաղաքակրթություն են տարածել, օրինականություն հաստատել իրենց նվաճած երկրներում և ամեն կերպ հովանավորել ոչ թուրք ազգություններին: Ի հակակշիռ թուրք պատմաբաններ Ինանի, Քյոփրյուլյուի, Ուզունչարշըլիի, Բարկանի, Ուրասի և ուրիշների նմանօրինակ խեղաթյուրումների, հեղինակը ներկայացնում է Կ.Մարքսի, Ն. Զեռնիշևսկու, Ս.Գլինկայի, Ու.Գլադստոնի, Վ.Հյուգոյի, Ս.Ցվայգի և այլոց բնութագրումները, որոնք միաձայն բացահայտում են օսմանյան պետության ավազակային և վայրագ էությունը: Ներսիսյանը ընդարձակ քաղվածքներ է կատարում նաև թուրքագետ և արևելագետ պատմաբաններ Ա.Տվերտինովայի, Ա.Միլլերի, Ի.Դոստյանի, Ցու. Պետրոսյանի, Զ.Ուդալցովայի, Ն.Դերժավինի, Ս.Ռանսիմենի, Ջ.Համմերի և այլոց աշխատություններից, որոնք հավաստում են, որ օսմանյան պետությունը իր գոյությունը պահպանել է միայն բազմաթիվ ավերիչ պատերազմներով, թալանով, գերեվարումներով ու ստրկավաճառությամբ: Ասվածն ամրապնդելու նպատակով հեղինակը դիմում է նաև թուրք պատմիչներ Իբրահիմ Փեչևիի, Քյաթիբ Չելեբիի, Էվլիա Չելեբիի, հայ մատենագիրներ Երեմիա Քյոմյուրճյանի, Աբրահամ Երևանցու, վրաց պատմիչների, այլ հեղինակների համանման վկայություններին:

Պատկերն ամբողջացնելու նպատակով հոդվածագիրը վկայակոչում է նաև XIX դ. եվրոպացի ականատես հեղինակներ Շատոբրիանին, Շաղ Դևալին, Ա.Ժոբերին, Ֆրիդրիխ Մելինդենին, Ֆիլիպ Քերրիին և ուրիշների: Իբրև դրանց ընդհանրացում է հնչում իռլանդացի հռչակավոր արևելագետ Էմիլ Դիլլոնի աշխատությունից բերված քաղվածքը, ըստ որի՝ Արևմտյան Հայաստանում հաստատված կառավարման գազանային համակարգի հետ համեմատած, Հյուսիսային Ամերիկայի հարավային նահանգներում մի ժամանակ գոյություն ունեցող ստրկական կարգերի դաժանությունները միայն աննշան չարաշահություններ են եղել: Թուրքական տիրապետությունը Հայաստանում բնորոշվում է որպես կազմակերպված ավազակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն:

Պատմագիտական կարևորագույն հիմնահարցեր են արծարծված «Հայ ազգային-ազատագրական շարժումը օսմանյան բռնապետության դեմ և պատմության կեղծարարները» հոդվածում: Խոսելով XIXդ. երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման մասին՝ վաստակաշատ գիտնականը գրում է, որ այդ շարժումը, ի տարբերություն նախորդ շրջանների, ուներ համազգային բնույթ: Նա եզրակացնում է, որ եթե XVI - XVIII դդ. հայ ազատագրական շարժման ղեկավարությունը գտնվում էր ազնվականության (մելիքների), հոգևորականության և առևտրական (խոջայական) կապիտալի ներկայացուցիչների ձեռքում, ապա XIXդ. երկրորդ կեսին այդ պայքարի գլխավոր շարժիչ ուժն արդեն գյուղացիությունն էր, գյուղի և քաղաքի մանր բուրժուազիան, դեմոկրատական, առաջավոր մտավորականությունը, իսկ պայքարն ուներ հակաֆեոդալական, դեմոկրատական բնույթ:

Մ.Ներսիսյանը գրում է, որ հայ ազատագրական պայքարի գաղափարախոսությունը XIXդ. երկրորդ կեսին խորացավ և լայն տարածում ստացավ: Եթե 1860-1880-ական թվականներին ազատագրական գաղափարների ձևավորման ու պրոպագանդման գործում վճռական դեր խաղացին այնպիսի ականավոր դեմքեր, ինչպիսիք էին Միքայել Նալբանդյանը, Ռափայել Պատկանյանը, Բաֆֆին, Գրիգոր Արծրունին և ուրիշներ, ապա 1880 - 1890-ական թվականներին շարժումը հիմնականում ղեկավարեցին արմենականները, հնչակյանները և Հայ հեղափոխական դաշնակցությունը:

Առաջ քաշելով հայ ազատագրական շարժման քաղաքական կողմնորոշման հարցը՝ հեղինակը անհերքելի փաստերով հիմնավորում է այն միտքը, որ հայ ժողովրդի ավանդական ռուսական կողմնորոշումը անփոփոխ մնաց նաև խնդրո առարկա ժամանակաշրջանում: Ազատագրական շարժման գրեթե բոլոր գործիչները պաշտպանում էին Գր. Արծրունու այն միտքը, թե «Միակ պետությունը, որի վրա հայերը կարող են հույս դնել, - այդ Ռուսաստանն է»: Հոդվածագիրն ամփոփում է. ռուսական կողմնորոշումը միանգամայն պատճառաբանված ու օրինաչափ երևույթ էր հայ իրականության մեջ:

Բազմաթիվ անհերքելի փաստերով ցույց տալով, որ հպատակ երկրներում օսմանյան պետությունը վարում էր բացարձակ բռնության, կամայականության, ստրկացման քաղաքականություն (Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում դյուղացիությունը գտնվում էր ճորտական վիճակում)՝ Մ.Ներսիսյանը վճռականորեն մերժում է պատմության թուրք կեղծարարներ Էսաթ Ուրասի, Սադի Կոչաշի, Աբդուլլա Ցամանի, Լենվեր Բարալի, Բիլել Շիմշիրի և մյուսների ստահոդ պնդումներն այն մասին, թե իբր Օսմանյան կայսրության մեջ հայերը գտնվել են բարեկեցիկ վիճակում, չեն ենթարկվել ճնշումների և հարստահարությունների, հետևապես պատճառ չեն ունեցել պայքարելու օսմանյան տիրապետության դեմ: Հակահարված է տրվում նաև թուրքական և արևմտյան ռեակցիոն պատմագրության մեջ արտահայտված այն հակագիտական դրույթներին, թե իբր Արևմտյան Հայաստանում բռնկված հակասուլթանական ելույթները չեն ունեցել ժողովրդական բնույթ, եղել են «գթասիրտ» սուլթանների դեմ ուղղված դավադրական ակտեր և կազմակերպվել ու հրահրվել են հայկական «կոմիտեների» կամ ռուսական պետության կողմից:

Ընդգծելով հայության ռուսական կողմնորոշման համաժողովրդական բնույթը՝ Մ.Ներսիսյանը գտնում է, որ այն ռեալ իրադրությունների ճիշտ գնահատման և ազգային շահերը դիտակցող առողջ մտածողության արդյունք էր: Ուստի պատահական չէր, որ ժամանակին ռուսական կողմնորոշմամբ հանդես եկան Իսրայել Օրին, Հովսեփ Էմինը, Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բաղրամյանը, Խաչատուր Աբովյանը, Ստեփանոս Նազարյանը, Միքայել Նալբանդյանը, Բաֆֆին, Գրիգոր Արծրունին, Արփիար Արփիարյանը և այլ հեռատես ու հայրենասեր գործիչներ: Ակադեմիկոսը միաժամանակ ձաղկում է օսմանյան կառավարությանը ծառայագրված այն մեծահարուստ էֆենդիներին, պահպանողական մտավորականությանը, հոգևորական և քաղաքական այն թուրքամետ գործիչներին, որոնք հանդես եկան ռուսական կողմնորոշման դեմ, ժխտում էին արևմտահայ ազգային-ազատագրական շարժման ինքնապաշտպանական բնույթը (ընդգծումը հեղինակինն է) և քարոզում էին հավատարիմ ու հնազանդ մնալ սուլթանին:

Մ.Ներսիսյանը ընդգծում է այն հանգամանքը, որ հայ ժողովրդի հավաքական գոյությունը, զանգվածային աճը, ազգահավաքը կամ այլ կերպ ասած ազգային կոնսոլիդացիան (ընդգծումը հեղինակինն է) տեղի ունեցան միայն Ռուսաստանի կազմում, առանց որի չէին կարող ստեղծվել ոչ Հայաստանի 1918 - 1920թթ. Հանրապետությունը, ոչ նրան հաջորդող Խորհրդային Հանրապետությունը:

Գիտնականը հիմնավորապես հերքում է XIXդ. վերջին - XXդ. սկզբին հրապարակ նետված կեղծ ու շինծու այն առասպելը, թե իբր ցարական կառավարությունը վարում էր Արևմտյան Հայաստանը հայաղրկելու քաղաքականություն, որի նպատակն էր ձեռք բերել «Հայաստանը առանց հայերի»: Նա

փաստերով ցույց է տալիս, որ այդ հեքիաթը հորինվել էր Լոնդոնում, անգլիացի ռուսատյացի կողմից, հեքիաթ, որը Ն.Պոկրովսկու գռեհիկ-սոցիոլոգիական դոգմաների ազդեցության տակ չրջանառության մեջ դրեցին մի շարք հայ հեղինակներ:

Հենց անգլիական չհրապարակված հույժ գաղտնի փաստաթղթերի հիման վրա Մ.Ներսիսյանը ցույց է տալիս, որ Ռուսաստանը 1890-ական թվականներին հանդես եկավ հայության զանգվածային կոտորածների դեմ Աբդուլ Համիդից պահանջելով անհապաղ վերջ տալ հայկական ջարդերին: Ռուսաստանի դեսպան Ա.Ի.Նելիդովը Աբդուլ Համիդի հետ ունեցած անձնական տեսակցության ժամանակ սպառնացել է ռուսական նավատորմից ռմբակոծել սուլթանի պալատները, եթե կոտորածներն անհապաղ չդադարեցվեն: Եվ Նելիդովի զայրույթից վախեցած սուլթանը անմիջապես հրաման արձակեց դադարեցնել հայերի կոտորածը (էջ 85): Ի դեպ, հեղինակը ցույց է տալիս, որ Ռուսաստանի դեմ ստեղծված հերյուրանքը ժխտում են նաև գերմանական և ֆրանսիական հեղինակավոր աղբյուրները:

Մ.Ներսիսյանն իրավամբ բացահայտ կեղծիք ու դատարկ շաղակրատանք է որակում ինչպես թուրք պատմաբանների, այնպես էլ նրանց ձայնակից այլազգի առանձին «պատմաբանների» այն պնդումը, որ եթե 1914թ. չկազմակերպվեին հայ կամավորական խմբեր, եթե տեղի չունենար Վանի 1915թ. ապրիլյան հերոսական ինքնապաշտպանությունը, ապա արևմտահայությունը զերծ կմնար ցեղասպանությունից: Նա ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ երիտթուրքերի որդեգրած ցեղասպանության քաղաքականության մասին անցյալում նշել են մի շարք թուրք գործիչներ և նրանց զինակից գերմանացի պաշտոնական անձինք՝ Հալեպի կառավարական պաշտոնյա Նայիմ բեյը, թուրքական Հանրապետության հիմնադիր Քեմալ փաշան, Կ. Պոլսի գերմանական դեսպան Վանգենհայմը և բարձրաստիճան շատ պաշտոնյաներ: 1919թ. Կ.Պոլսում և 1921թ. Բեռլինում տեղի ունեցած դատավարությունների հրապարակած նյութերը անհերքելիորեն հաստատում են, որ հայոց ցեղասպանությունը կատարվել է կանխամտածված ծրագրով, երիտթուրքական կառավարության ու կուսակցության կենտկոմի հրահանգներով:

Մ.Ներսիսյանը արժեքավոր տվյալներ է հաղորդում 1983թ. ժողովուրդների մնայուն ատյան միջազգային կազմակերպության կողմից Փարիզում (Սորբոն) անցկացված հատուկ նստաշրջանի մասին, որի դատակազմում ընդգրկվել էին տարբեր երկրների նշանավոր գիտնականներ, իրավաբաններ, տնտեսագետներ և որտեղ չորս օր շարունակ՝ ապրիլի 13 - 16-ը, քննարկվեց Հայոց ցեղասպանության հարցը: Ատյանի ընդունած դատավճռում անվերապահորեն ասված է, որ Հայոց 1915 - 1916թթ. ցեղասպանությունն անժխտելի է, որ այն իրագործելիս է երիտասարդ թուրքերի կառավարությունը՝ կանխամտածված ծրագրով ու անօրինակ բարբարոսությամբ:

Մ.Ներսիսյանը ընդգծում է, որ հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքերի ոճրագործ քաղաքականությունը շարունակվեց նաև հետագա տարիներին: 1918թ. թուրքական բանակը ներխուժեց Արևելյան Հայաստան ու Անդրկովկաս, և թուրք ազգայնամոլները 1920 - 1921թթ. փորձեցին ցեղասպանություն կազմակերպել նաև արևելահայության դեմ, բայց ռուսական 11-րդ Կարմիր բանակի վճռական միջամտության շնորհիվ դա նրանց չհաջողվեց:

Մեր ժողովրդի ճակատագրով անհանգստացած գիտնականը կոչ է անում լինել զգոն և սթափ, հաշվի առնել պատմության դասերը, գտնելով, որ դա անհրաժեշտ է հատկապես այսօր, երբ ժամանակակից պանթուրքիստական ուժերը և նրանց թիկունքին կանգնած պետությունները բացահայտ աշխուժություն են ցուցաբերում Անդրկովկասի և ընդհանրապես ամբողջ Կովկասի նկատմամբ, առաջ են քաշում «Կովկասյան տուն», «Կովկասյան դաշնություն» ստեղծելու ծրագրեր, որոնց իրականացումը հայ ժողովրդին կբերի միայն նոր աղետ, նոր ցեղասպանություն: Իսկ արևմտյան պետություններից օգնություն սպասել չի կարելի:

«Արևմտահայերի 1915 - 1916թթ. ցեղասպանության պատմության մի քանի հարցերի շուրջ» հոդվածում ակադեմիկոսը 6 խմբերի մեջ առանձնացնում է Մեծ եղեռնի պատմության մի շարք հարցեր, որոնք դեռևս կարիք ունեն հանդամանալի ուսումնասիրության: Նշելով, որ դեռևս անրավարար է լուսաբանված երիտթուրքերի 1909 - 1914թթ. վարած ազգային՝ քաղաքականությունը, նա գրում է, որ արդեն

1912-1913թթ. երիտթուրքերը գործնական քայլեր են ձեռնարկել հայերի համընդհանուր կոտորածներ կազմակերպելու ուղղությամբ: Միաժամանակ, նա մերժում է պատմագիտական գրականության մեջ արտահայտված այն սխալ տեսակետը, թե իբր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գերմանացիներն են ղեկավարել Թուրքիայի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականությունը, որ երիտթուրքերը միայն կատարել են գերմանացի զինվորականների ու գիվանագետների կամքը: Իրողությունը, սակայն, այն է, որ Մեծ եղեռնի գլխավոր հանցագործները երիտթուրքական ռազմաշունչ գործիչներն էին, որոնք ոչ թե գերմանացիների տուկ գործակալներն ու կամակատարներն էին, այլ ունեին իրենց սեփական մտածված ու մշակված ազգաջնջողական ծրագրերը:

«Արևմտահայերի կոտորածները և ռուս մտավորականությունը 1894 - 1896 թվականներին» հոդվածում Մ.Ներսիսյանը ցույց է տալիս ռուս գիտնականների, գրողների ու հասարակական-քաղաքական մտքի նշանավոր ներկայացուցիչների դիրքորոշումը մեր ժողովրդի՝ այդ տարիների ողբերգության նկատմամբ: Այդ առումով նա բարձր է գնահատում 1896թ. Մոսկվայում ռուս մտավորականների ջանքերով լույս տեսած "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году" (М., 1896), "Братская помощь пострадавшим в Турции армянам" (М., 1897) ժողովածուները:

Ողբերգական վիճակում գտնվող արևմտահայությանը զգալի օգնություն ցույց տվեցին նաև Ռուսաստանի պաշտոնական շրջանները՝ ցարական կառավարության ինչպես բարձրագույն, այնպես էլ ստորին օղակները: Ի հաստատումն դրա, Ներսիսյանը վկայակոչում է 1897թ. դեկտեմբերի 11-ին Նիկոլայ 2-րդ կայսեր ստորագրած հրամանագիրը, ըստ որի, ամբողջ երկրում անցկացվեց հանգանակություն՝ հայ զաղթականներին նյութական ու բարոյական օգնություն կազմակերպելու համար: Այդ բարեկամական ավանդույթը շարունակվեց նաև Մեծ եղեռնի տարիներին:

Հետևողականորեն դիմակազերծ անելով պատմության նենգափոխիչներին, ովքեր փորձում են արդարացնել օսմանյան բռնապետության քաղաքականությունը կամ վարկաբեկել հայ ժողովրդի ազատագրական շարժումը, Մ.Ներսիսյանը գրքում հատուկ ընդգծում է, որ հայ ազգային-ազատագրական պայքարն ուներ գնրազանցապես ինքնապաշտպանական բնույթ:

«Թուրքմենչայի դաշնագրի պատմական նշանակությունը» հոդվածում, որը նվիրված է պայմանագրի 170-ամյակին, թվարկվում են Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո տեղի ունեցած դրական փոփոխությունները արևելահայության ֆիզիկական բնաջնջման, երկրի հայաթափման պրոցեսի դադարեցում, հայ բնակչության թվակազմի կտրուկ ավելացում, տնտեսական, մշակութային, հասարակական-քաղաքական կյանքի զարգացում, ազգային համախմբում և այլն:

Համանման խոհերի յուրատեսակ արտահայտություն է նաև «Պատմական մեծ իրադարձություն» հոդվածը, որը նվիրված է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 1997թ. օգոստոսի 29-ին Մոսկվայում կնքված պայմանագրին: Գիտնականն այն գնահատում է իբրև եզակի պայմանագիր, բարեկամական իսկական դաշինք, որը շատ կարևոր նշանակություն կունենա Հայաստանի թե ներկայի, թե ապագայի համար:

Գրքի երկրորդ բաժնում հրապարակված են մի շարք արխիվային նյութեր՝ հեղինակի անհրաժեշտ մեկնաբանություններով ու գնահատականներով: Պատմագիտական որոշակի արժեք են ներկայացնում «Հայկական հարցի արծարծումը 1912 թվականին», «Հայկական հարցի և հայ կամավորների մասին (1912 - 1915թթ.)», «Հեմալական զորքերի բարբարոսությունները Արևելյան Հայաստանում 1920թ. վերջին և 1921թ. սկզբին», «Արխիվային նյութեր Խրիմյան Հայրիկի մասին» հրապարակումները և այլ նյութեր:

Գրքի վերջում զետեղված է ՀՀ Գ.Ա.Ա. Պատմության ինստիտուտի պատրաստած կենսագրական համառոտ տեղեկանքը՝ կյանքի իններորդ տասնամյակը բոլորած հայոց պատմության մեր օրերի վաստակաշատ գիտնականի մասին:

Մ.Ս.ԿԱՄԱՊԵՏՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր